Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-720[10]-23.11.2023-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Այլընտրանքային ծառայության մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-6-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում «հաշմանդամություն ունեցող» բառերը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասում «խեղման» բառը փոխարինել «վնասվածքի», «հաշմանդամ» բառը՝ «հաշմանդամություն ունեցող անձ» բառերով:

Հոդված 3. Օրենքում գործածվող՝ աշխատանքային վնասվածք ստացած այլընտրանքային աշխատանքային ծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին վերաբերող դրույթների գործողությունները տարածվում են նաև մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը աշխատանքային խեղում ստացած այլընտրանքային աշխատանքային ծառայողների և նրանց ընտանիքների անդամների վրա: